ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ԴԾ-2021/17-29
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» սեպտեմբեր, 2021թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ֆոլդինկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն, ի դեմս տնօրեն Էմմանուել Ղանդիլյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), ում անունից 2021 թվականի սեպտեմբերի 4-ին տրամադրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Վահան Գրիգորյանը, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2021 թվականի հունվարի 27-ի ««Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն», «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ», «Հայկական վիրտուալ կամուրջ», «Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառումների ծրագրերը հաստատելու մասին» N 61-Ա հրամանը (այսուհետ՝ Հրաման), «Ֆոլդինկ» ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Ծրագրի իրականացման շրջանակներում Կազմակերպությանը հատկացնել 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրին համապատասխան:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունը իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով և սույն պայմանագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (Միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. Իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին և պայմաններին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Նախարարությունից պահանջել վճարել իրեն պայմանագրով նախատեսված գումարները սույն պայմանագրի 4.1 կետին համապատասխան:

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. Անհրաժեշտության դեպքերում, սույն պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման շրջանակներում, Կազմակերպությանը ցուցաբերել խորհրդատվական աջակցություն:

2.3.2. Կատարել Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ:

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված Միջոցառումների մասին ներկայացված կատարողական ամփոփիչ հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել՝ այն ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե իրականացված Միջոցառումները համապատասխանում են Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա այն ընդունվում է: Ընդ որում, Նախարարությունը, հաշվետվությունն ընդունելու դեպքում, եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել Ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան (առանձնացված) հաշվառում:

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.3. Կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանն անհապաղ տեղեկացնել Միջոցառումների իրականացմանը սպառնացող դժվարությունների կամ իրականացման անհնարինության վերաբերյալ:

2.4.5. Ծրագրով և սույն պայմանագրով նախատեսված Միջոցառումները կատարել՝ չխախտելով երրորդ անձանց իրավունքները:

2.4.6. Ծրագրով և սույն պայմանագրով նախատեսված Միջոցառումները (փուլային և ավարտական) իրականացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պաշտոնական գրության տեսքով ներկայացնել իրականացված Միջոցառումների կատարողականի վերաբերյալ Կազմակերպության ընթացիկ (փուլային) և ամփոփիչ հաշվետվություն՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս համարվող թիվ 2 հավելվածի համաձայն՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.7. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին և այլ նյութերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.8. Ծրագրի, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման ընթացքում Նախարարության կողմից անհամապատասխանությունների բացահայտման, ինչպես նաև ընթացիկ (փուլային) և ամփոփիչ հաշվետվությունների չընդունման դեպքում՝ Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները, չվերացնելու դեպքում հատուցել պատճառված վնասները:

2.4.9. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.10. Սույն պայմանագրի 2.4.6 կետում նշված ժամկետներում կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա դիմաց վճարել տույժ՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 0.05 տոկոսի չափով:

2.4.11. Ծրագիրն իրականացնել առավելագույնը 12 (տասներկու) ամսվա ընթացքում:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 75 (յոթանասունհինգ) տոկոսը՝ 7,500,000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը, Կազմակերպությանը կտրամադրի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մնացած գումարը՝ 25 (քսանհինգ) տոկոսը՝ 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը, սույն պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվությունները Նախարարության կողմից ընդունվելուց հետո, բայց ոչ ուշ, քան 2022 թվականի սեպտեմբերի 30-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և (կամ) Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, բացառությամբ պայմանագրի 2.4.10 կետի, Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները կարող է հաշվարկել և հաշվանցել Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի

ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031912
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան

_____

Կազմակերպություն

«Ֆոլդինկ» ՍՊԸ

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022582701003
ՀՎՀՀ 00204661
Լիազորված անձ՝ Վահան Գրիգորյան

_____

Հավելված 1
2021թ. սեպտեմբերի 28-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՇ-2021/17-29 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

.	Իրականացվելիք միջոցառում							
Փուլի #	Փուլի նպատակ	Գործողության (կատարվելիք աշխատանքների) նկարագիր	Գործողության ակնկալվող արդյունք (փուլի ավարտին)	Արդյունքային ցուցանիշ	Նպատակային արժեք	Փուլի սկիզբ	Փուլի ավարտ	Փուլի համար ծախսվելիք գումար
1	Բիոթանաքների վաճառքային տարբերակների հաստատում	Բիոթանաքների կոմերցիալիզացիայի համար անհրաժեշտ է վերջնականապես հաստատել վաճառքի ենթակա տարբերակների բաղադրությունը: Այդ նպատակով նախապես իրականացված գրականության խորը վերլուծությունից հետո դուրս են բերվել բիոթանաքների առավել արդյունավետ բաղադրությունները, սակայն կարիք կա դրանց	• Կոլլագենային և ժելատինային հիմքով բիոթանաքների բաղադրությամբ տարբերվող տարբերակների պատրաստում • բիոթանաքների տպելիության ուսումնասիրում •բիոթանաքներում բջիջների ապրելիության ուսումնասիրում • վերջին փուլերի տվյալների հիման վրա լավագույն	Բիոթանաքների վաճառքային տարբերակներ	Փաթեթավորված վաճառքային տարբերակների նկարներ	Հոկտեմբերի 1, 2021	Մարտի 1, 2022	6.500.000 դրամ

		վարիացիաներից ընտրել ամենահարմարները: Մենք կոմերցիալիզացնելու ենք Կոլագեն-ալգինատային, կոլագեն-մետակրիլատ, ժելատին-մետակրիլատ և ժելատին-ալգինատային բիոթանաքները: Պատրաստելու ենք ամեն տեսակի թանաքից բաղադրամասերի տարբեր փոխհարաբերությամբ տեսակներ փոքր քանակություններով հաջորդ ենթափուլում դրանց ֆիզիկական և կենսաբանական հատկությունների ուսումնասիրման համար: Քանի որ բիոթանաքները նախատեսված են բիոպրինտերով	տարբերակների ընտրություն • ընտրված բիոթանաքների տեխնիկական բնութագրերի կազմում • բիոթանաքների 22ալցման և փաթեթավորման դիզայն և իրականացում • թեստավորման հավաքածուների պատրաստում					

		Տպելու ընթացքում գնահատվելու է դրա հարմարությունը իր նախատեսված նպատակի համար, ապա նաև լուսային մանրադիտակի տակ գնահատվելու է տպագրված օբյեկտների ճշտությունը, անկյունների կլորացման աստիճանը և այլ պարամետրեր: Այդ նույն նմուշները ենթարկվելու են կենսաբանակն հետազոտության ևս: Դրանց միջոցով տպագրվելու է կրկին անգամ համանման մոդելներ բջիջների առկայությամբ, սակայն այս անգամ գնահատվելու է այդ բջիջների ապրելիությունը տվյալ նմուշի միջավայրում: Այս երկու նախնական ուսումնասիրությունից						

		հետո պարզ են դառնալու ընտրված բիոթանաքների առավել բարձր տպելիությամբ և բջիջների ապրելիությամբ օժտված վարիացիաները: Ստացված տվյալները օգտավետ են լինելու նաև վաճառքային տարբերակների տեխնիկական բնութագրերի և օգտագործման ձեռնարկների պատրաստման մեջ: Հաջորդ քայլով ձեռնամուխ ենք լինելու ընտրված տարբերակների վերոնշյալ ձեռնարկների պատրաստմանը, որոնք պարտադիր կերպով ընդգրկվելու են գնորդներին ուղարկվող փաթեթներում: Քանի որ բիոթանաքները						

		դրանք հիդրոգելեր էր ապա առավել նպատակահարմար պահպանման և տեղափոխման տարբերակը դրանք ներարկիչներն են: Ստերիլ բիոթանաքները 22ալցվելու են 3մլ և 5մլ ներարկիչների մեջ: Ապա ներարկիչները տեղադրվելու են անլուսաթափանց և հերմետիկ ալյումինե փաթեթների մեջ: Այդ փաթեթներն էլ արդեն տեղադրվելու են մեր բրենդային ոճով պատրաստված արկղերի մեջ: Ունենալու ենք հատուկ հավաքածուներ՝ բիոթանաքների տարբեր տեսակների քիչ քանակությամբ նմուշներ պարունակող, որոնք մինչև գնորդի հետ բուն վաճառքի						

		վերաբերյալ պայմանավորվածությունը, ուղարկվում է գնորդին: Նա փորձարկում է տարբեր բիոթանաքները, գնահատում է դրանց հատկությունները և որոշում է թե կոնկրետ որ տեսակն է իրեն հարկավոր:						
2	Բիոթանաքների վաճառք	Բիոթանաքների վաճառքները իրականացնելուց առաջ անհրաժեշտ է կազմել պոտենցիալ գնորդների ցուցակը իրենց կոնտակտային տվյալներով: Հաջորդ ենթափուլում կապ ենք հաստատելու պոտենցիալ գնորդների հետ պայմանավորվելու ենք նրանց թեստային նմուշներ ուղարկել: Կնքելու ենք նախավաճառքային պայմանագիր կամ ստանալու ենք հաստատող նամակ	• պոտենցիալ գնորդների ցուցակագրում • պոտենցիալ գնորդների հետ բանակցությունների վարում • պոտենցիալ գնորդների հետ նախավաճառքային պայմանագրերի կնքում	Նախավաճառ-քային պայմանագրեր	4 նախավաճառ-քային պայմանագրեր կամ հետաքրքրության նամակների սկրինշոթեր	Մարտի 1, 2022	Սեպտեմբերի 1, 2022	3.500.000 դրամ

					մեկ ամսվա ընթացքում կնքված գնման պայմանագիր: Սակայն հնարավոր է դառնում հանձնարարագրի փոփոխություն հետո նշված նվազագույն հաշվով կնքվելիք գնման պայմանագրի կնքման ժամանակ:	
Ընդամենը՝ 10.000.000 << դրամ						

Կատարողներ՝

«Ֆոլդինկ» ՍՊԸ
ընդհանրական տեղեկություններ ստանալու համար՝
ք. Երևան, Օղերի եզրագծերի 22
«Ինկոդրանկ» ՓԲԸ
հ/հ 20500225827010 03
հՀՀ 00204661
Լիսանովիչ Վիկտոր Գրիգորյան

_____

Պատվիրատու՝

<< բաժնի տեղեկատվության ատանդարտացման ու տեղեկատվության
նախարարություն
ՀՀ գործադիր վերնշանով
ք. Երևան, Կարգեն Սարգսյան 3/3,
հՀՀ 900011031912
հՀՀ 02565518
Գրիգորյան Դավիթ Սամվելի

_____

Հավելված 2
դի-28-ին վերաբերող ՀԱՀԿԾ-ԲՀ-2021/17-29 պայմանագրի
վերջնաժամկետ թիվ 1202

Սարքավորման անվանումը	Արտադրող ֆիրմա, մակնիշ, տիպ, մոդելի համարը	Արտադրության երկիրը	Մինչև տեղադրումը (պահպանումը) անհրաժեշտ պայմանները	Մինչև ցանցային կցումը (պահպանումը) անհրաժեշտ պայմանները	Ընդունվող
փուլի նախատեսված իրատարակման					

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկատվությունը, տեղեկությունները, փաստաթղթերը (պայմանագրեր, հանձնման-ընդունման ակտեր, հաշիվ-ապրանքագրեր, հաշվարկներ) և դրանցում նշված տեղեկությունները ամբողջությամբ ճշգրիտ են, դրանց տրամադրումը ոչ մի կերպ չի խախտում մեր կողմից կնքված գաղտնիության պայմանագրի պահանջները:

Գործընկերոջ

Տնօրեն՝ Գարիկ Մարգարյան 3/3,
նախագահող
ՀՀ քաղաքացի Վարդան Մարգարյան
ՀՀ 900011031912
ՀՀ 02565518
ՀՀ քաղաքացի Գարիկ Մարգարյան

դիմաց՝ հանձնման-ընդունման ակտերը կազմող անձանց տվյալներ

«Ֆոլդինկ» ՍՊԸ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
ԸՀՎՀ՝ 20500225827010 03
ՀՀՀ՝ 00204661
Լիազորված անձ՝ Վահան Գրիգորյան

դիմաց՝ հանձնման-ընդունման ակտերը կազմող անձանց տվյալներ

Գարիկ Մարգարյան
նախագահող
ՀՀ քաղաքացի Վարդան Մարգարյան 3/3,
ՀՀ 900011031912
ՀՀ 02565518
ՀՀ քաղաքացի Գարիկ Մարգարյան